

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԻ ԿՈՂՄԻՑ, ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՑ, ՄԻՋԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Եվրոպական Միությունը, այսուհետ՝ "Միություն",

մի կողմից,

և

Հայաստանի Հանրապետությունը, այսուհետ՝ "Հայաստան",

մյուս կողմից,

այսուհետ՝ "Կողմեր",

նկատի ունենալով, որ

(1) Հայաստանը կնքել է Գործընկերության եւ համագործակցության համաձայնագիրը (այսուհետ՝ "Համաձայնագիր")՝ Եվրոպական համայնքների եւ դրանց Անդամ պետությունների՝ մի կողմից, եւ Հայաստանի միջեւ՝ մյուս կողմից, որն ուժի մեջ է մտել 1999թ. հուլիսի 1-ին,

(2) Եվրոպական խորհուրդը 2004թ. հունիսի 17-ից 18-ը Բրյուսելում տեղի ունեցած նիստի ընթացքում ողջունել է Եվրոպական հարեւանության քաղաքականության (ԵՀՔ) վերաբերյալ Եվրոպական հանձնաժողովի առաջարկները, եւ հաստատել է 2004թ. հունիսի 14-ի Խորհրդի եզրակացությունները,

(3) հետագա բազմաթիվ առիթներով, Խորհուրդը բազմիցս որոշումներ է կայացրել հոգուտ այս քաղաքականության,

(4) 2007թ. մարտի 5-ին Խորհուրդը հայտնել է իր աջակցությունը Եվրոպական հանձնաժողովի 2006թ. դեկտեմբերի 4-ի հաղորդագրությունում ուրվագծված ընդհանուր եւ գլոբալ մոտեցմանը, որը հնարավորություն է ընձեռում Եվրոպական հարեւանության քաղաքականության գործընկերակրներին, համաձայն իրենց արժանիքների, մասնակցելու Համայնքի գործակալություններին եւ Համայնքի ծրագրերին՝ այն դեպքերում, երբ իրավական հիմքերը թույլ են տալիս,

(5) Հայաստանը ցանկություն է արտահայտել մասնակցելու Միության մի շարք ծրագրերին,

(6) հատուկ դրույթները եւ պայմանները, մասնավորապես՝ ֆինանսական ներդրումը եւ հաշվետվությունների ու գնահատման ընթացակարգերը, որոնք վերաբերում են Հայաստանի մասնակցությանը յուրաքանչյուր կոնկրետ ծրագրին, պետք է սահմանվեն Եվրոպական հանձնաժողովի եւ Հայաստանի իրավասու մարմինների միջեւ Փոխըմբռնման հուշագրում,

համաձայնեցին հետեւյալի մասին.

ՀՈՂՎԱԾ 1

Հայաստանը պետք է հնարավորություն ունենա մասնակցելու Միության այն բոլոր ընթացիկ եւ հետագա ծրագրերին, որոնք բաց են Հայաստանի մասնակցության համար՝ համաձայն այդ ծրագրերի հաստատման վերաբերյալ համապատասխան դրույթների:

ՀՈՂՎԱԾ 2

Հայաստանը պետք է ֆինանսական ներդրում ունենա Եվրոպական Միության ընդհանուր բյուջեում՝ այն կոնկրետ ծրագրերին համապատասխան, որոնց մասնակցում է Հայաստանը:

ՀՈՂՎԱԾ 3

Հայաստանի ներկայացուցիչները պետք է հնարավորություն ունենան, որպես դիտորդներ եւ Հայաստանին վերաբերող հարցերում, մասնակցելու այն ծրագրերի դիտարկման համար պատասխանատու կառավարման կոմիտեներին, որոնցում Հայաստանը ֆինանսական ներդրում ունի:

ՀՈՂՎԱԾ 4

Հայաստանից մասնակիցների կողմից ներկայացվող ծրագրերի եւ նախաձեռնությունների վրա հնարավորին չափով պետք է տարածվեն միեւնույն պայմանները, կանոնները եւ ընթացակարգերը, որոնք տվյալ ծրագրերի նկատմամբ կիրառվում են Անդամ պետությունների դեպքում:

ՀՈՂՎԱԾ 5

Յուրաքանչյուր կոնկրետ ծրագրին Հայաստանի մասնակցությանն առնչվող հատուկ դրույթները եւ պայմանները, մասնավորապես՝ վճարման ենթակա ֆինանսական ներդրումը եւ հաշվետվությունների ու գնահատման ընթացակարգերը, պետք է սահմանվեն Եվրոպական հանձնաժողովի եւ Հայաստանի իրավասու մարմինների միջեւ Փոխըմբռնման հուշագրում՝ հիմք ընդունելով տվյալ ծրագրերի կողմից հաստատված չափանիշները:

Եթե Միության կոնկրետ ծրագրի մասնակցելու նպատակով Հայաստանը դիմի Միության արտաքին աջակցության համար՝ հիմք ընդունելով Եվրոպական խորհրդարանի եւ Խորհրդի 2006թ. հոկտեմբերի 24-ի 1638/2006 կանոնակարգի (ԵՀ) հոդված 3-ը, որով սահմանվում են Եվրոպական հարեւանության եւ գործընկերության գործիքի ընդհանուր դրույթները, կամ համաձայն Միության կողմից Հայաստանին արտաքին օգնություն տրամադրելու վերաբերյալ որեւէ նմանատիպ կանոնակարգի, որը կարող է ընդունվել ապագայում, ապա Հայաստանի կողմից Միության արտաքին աջակցությունն օգտագործելու պայմանները պետք է սահմանվեն ֆինանսավորման համաձայնագրով՝ մասնավորապես հաշվի առնելով 1638/2006 կանոնակարգի (ԵՀ) հոդված 20-ը:

ՀՈՂՎԱԾ 6

Հողված 5-ի համաձայն կնքված յուրաքանչյուր Փոխըմբռնման հուշագիր, համաձայն Եվրոպական համայնքների ընդհանուր բյուջեի համար կիրառելի Ֆինանսական կանոնակարգման մասին 2002թ. հունիսի 25-ի 1605/2002 Խորհրդի կանոնակարգի (ԵՀ, Եվրատոմ), պետք է սահմանի, որ ֆինանսական վերահսկողությունը կամ աուդիտը կամ այլ ստուգումները, ներառյալ վարչական հետաքննությունները, կիրականացվեն Եվրոպական հանձնաժողովի, Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակի եւ աուդիտորների դատարանի կողմից կամ նրանց իրավասության ներքո:

Ֆինանսական վերահսկողության եւ աուդիտի, վարչական միջոցառումների, տուգանքների եւ վերականգնումների վերաբերյալ պետք է սահմանվեն մանրամասն դրույթներ՝ հնարավորություն ընձեռելով Եվրոպական հանձնաժողովին, Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակին եւ Աուդիտորների դատարանին ձեռք բերել Միությունում հիմնադրված շահառուների կամ կապալառուների նկատմամբ իրենց ունեցած իրավասություններին համարժեք իրավասություններ:

ՀՈՂՎԱԾ 7

Սույն Արձանագրությունը կիրառվում է Համաձայնագրի ուժի մեջ լինելու ժամանակահատվածում:

Կողմերը ստորագրում եւ հաստատում են սույն Արձանագրությունը՝ համաձայն իրենց համապատասխան ընթացակարգերի:

Կողմերից յուրաքանչյուրը կարող է չեղյալ համարել սույն Արձանագրությունը՝ այդ մասին գրավոր ծանուցելով պայմանագրային մյուս Կողմին:

Սույն Արձանագրությունը դադարում է գործել այդպիսի ծանուցում ստանալու օրվանից 6 ամիս հետո:

Կողմերից ցանկացածի կողմից չեղյալ հայտարարելուց հետո Արձանագրության դադարեցումը չպետք է ազդեցություն ունենա ստուգումների եւ վերահսկողության վրա, որոնք իրականացվելու են 5-րդ եւ 6-րդ հոդվածների դրույթների համաձայն՝ ըստ նպատակահարմարության:

ՀՈՂՎԱԾ 8

Սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելուց ոչ ուշ քան երեք տարի հետո, եւ դրանից հետո յուրաքանչյուր երեք տարին մեկ, Կողմերը կարող են վերանայել սույն Արձանագրության իրականացման գործընթացը՝ Միության ծրագրերին Հայաստանի փաստացի մասնակցության հիման վրա:

ՀՈՂՎԱԾ 9

Սույն Արձանագրությունը մի կողմից տարածվում է այն տարածքների վրա, որոնց նկատմամբ գործում է Եվրոպական միության գործունեության մասին պայմանագիրը՝ այդ Պայմանագրով սահմանված պայմաններին համապատասխան, եւ մյուս կողմից՝ Հայաստանի տարածքի վրա:

ՀՈՂՎԱԾ 10

Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ընթացակարգերի ավարտի մասին դիվանագիտական ուղիներով Կողմերի՝ միմյանց ծանուցելու օրվան հաջորդող ամսվա առաջին օրը:

ՀՈՂՎԱԾ 11

Սույն Արձանագրությունը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մաս:

ՀՈՂՎԱԾ 12

Սույն Արձանագրությունը կազմված է բուլղարերեն, չեխերեն, դանիերեն, հոլանդերեն, անգլերեն, էստոներեն, ֆիններեն, ֆրանսերեն, գերմաներեն, հունարեն, հունգարերեն, իտալերեն, լատիշերեն, լիտվերեն, մալթերեն, լեհերեն, պորտուգալերեն, ռումիներեն, սլովակերեն, սլովեներեն, իսպաներեն, շվեդերեն եւ հայերեն լեզուներով բնօրինակներից, ընդ որում տեքստերից յուրաքանչյուրը հավասարազոր է:

Կատարված է Բրյուսել քաղաքում, 2012թ. դեկտեմբերի 17-ին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2014թ. մարտի 1-ին